
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական ճգնաժամի հնարավոր ազդեցությունը Իրանի էներգետիկ անվտանգության վրա	4
Թուրքմենստանն արևմուտքի հետ էներգետիկ պայմանավորվածության նախօրեի՞ն	7
Бакинский энергосаммит и энергетическая геополитика постсоветского пространства	10
Темпы распространения «мирного атома» будут расти	13
Բաքուն փորձում է առանցքային դեր ստանձնել արևելք-արևմուտք էներգետիկ միջանցքում	16
«Բրիթիշ Փեթրոլիում». բնական գազի համաշխարհային պաշարները	19
Новости ТЭК Южного Кавказа и Каспия (11 ноября – 10 декабря)	27

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

2008թ. հոկտեմբերի 15-ին Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին հայտարարեց, որ աշխարհում ծավալված միջազգային ֆինանսական ճգնաժամն ազդարարում է «կապիտալիզմի մահը»: Խամենեիի հայտարարությունից մեկ օր առաջ արդեն Իրանի նախագահը նշել էր, որ ֆինանսական ճգնաժամը կհանգեցնի ամերիկյան հեգեմոնիայի ավարտին: Չնայած այսպիսի «լավատեսական» գնահատականներին, ֆինանսական ճգնաժամը և նավթի անկումն ապրող գները կարող են լուրջ մարտահրավեր նետել հենց Իրանի Բսլամական Հանրապետությանը: Հաջորդ լուրջ մարտահրավերները, որոնց հետ կարող է բախվել Թեհրանը, անկայունության աճն է Հարավային Ասիայում և սեփական «միջուկային դոսիեի» լուծման ձգձգումը:

Նավթի գների անկումը

Իրանի համար նավթի գների անկման նշանակությունը գնահատելու տեսանկյունից կարելի է նշել գոնե միայն այն, որ իսլամական հանրապետության պետական բյուջեի շահութային մասի 85 տոկոսն ապահովվում է նավթային սեկտորի կողմից: 2008-ի տարեվերջյան գները, որոնք տատանվում են 40-50 ԱՄՆ դոլարի շրջանակներում, կարող են բերել Իրանի մակրոտնտեսական անվտանգության խափանմանը, եթե, իհարկե, այդ գները պահպանվեն հաջորդ ամիսների և առավել ևս տարվա ընթացքում:

Հոկտեմբերի 11-ին Իրանի Կենտրոնական բանկի ղեկավարը հայտարարեց, որ նավթի գները հասել են «տագնապի սուլոցի» աստիճանի, և եթե առաջիկա շրջանում լուրջ փոփոխություններ չլինեն նավթի գների հետ կապված, երկիրը կկանգնի լրջագույն հիմնախնդիրների առաջ: Նոյեմբերի 15-ին Իրանի նախկին նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանին, հավանաբար իր քննադատությունն ուղղելով Մ.Ահմադինեժադի հասցեին, հայտարարեց. «Մենք չպետք է մտածենք, որ աշխարհը կլանած ֆինանսական ճգնաժամը մեր շահերի օգտին է և ուրախանանք: Նավթի գների անկումը առաջնային սպառնալիք է մեզ համար»:

Հիմնական գործոններից մեկը, որը կարող է օգնել Իրանին նավթի գների անկման հետևանքով առաջ եկող հիմնախնդիրներին որոշակիորեն դիմակայելու գործում, կարող է համարվել վերջին տարիների ընթացքում նավթի բարձր գների շնորհիվ առաջացած գերեկամուտների կուտակումը: Ամռանն Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացման և պատժամիջոցների կիրառման սպառնալիքի առկայության պատճառով Իրանի նախագահի հրամանով իրանական պետական բանկերը և ֆինանսների նախարարությունը եվրոպական բանկերից դուրս են բերել մոտավորապես 50 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող ներդրումները, վաճառել եվրոպական արժեթղթերը, այս քայլերի արդյունքում առաջացած գումարները ներդրվել են բուն իրանական բանկային ակտիվներում:

Այս գումարները կառավարությանը հնարավորություն կտան կարճաժամկետ հեռանկարում կայունացնել մակրոտնտեսական իրավիճակը երկրում և ապահովել պետական բյուջեի սոցիալական ծախսերի հատվածի համեմատաբար լիարժեք կատարումը: Մակայն միջնաժամկետ և առավել ևս՝ երկարաժամկետ կտրվածքում Թեհրանն իր վրա կկրի միջազգային ֆինանսական ճգնաժամի ողջ ազդեցությունը:

Միջուկային հիմնախնդիրը

Նավթի գների անկումը համաշխարհային շուկայում Իրանի համար պարունակում է ևս մեկ վտանգ. ՄԱԿ ԱԽ-ը ավելի ազատ կարող է գտնվել Իրանի դեմ լուրջ պատժամիջոցներ կիրառելու տեսանկյունից: Վերջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ-ը միջազգային հան-

րությանը ներկայացնում էր իրանական նավթի ներկրումը սահմանափակող պատժամիջոցներ կիրառելու պահանջ: Սակայն Վաշինգտոնի այս պահանջը հիմնականում քարոզչական նշանակություն ուներ, քանի որ նավթի բարձր գների պայմաններում նման պատժամիջոցները կարող էին բերել էներգակիրների գնի հերթական աճի, որը լուրջ վտանգ էր ներկայացնում հենց Արևմուտքի համար, սահմանափակում տնտեսական աճը: Ըստ որոշ վերլուծաբանների՝ նավթի բարձր գները միջազգային ֆինանսական ճգնաժամի առաջացման հիմնական պատճառներից են: Այսօր, սակայն, երբ նվազում է նավթի համաշխարհային սպառումը և գների զգալի իջեցում է արձանագրվել, պատժամիջոցներն Իրանի նավթային սեկտորի նկատմամբ համաշխարհային տնտեսական կայունության վրա մեծ ազդեցություն չեն կարող ունենալ:

Նույնը կարելի է ասել նաև Իրանի նկատմամբ հնարավոր ռազմական գործողության կիրառման վերաբերյալ, որի հետևանքները համաշխարհային տնտեսական համակարգի համար նվազագույն կարող են լինել: Չնայած Վաշինգտոնում նոր վարչակազմի հաստատումից հետո Իրանի հետ ռազմական ընդհարման հնարավորությունը զգալիորեն նվազել է, Նահանգներում քիչ չեն այն ազդեցիկ վերլուծաբանները, որոնք ռազմական հարվածը Իրանի նկատմամբ համարում են միջուկային հիմնախնդրի լուծման միակ տարբերակը: Այս տեսակետն էր հիմնականում գերիշխում դեկտեմբերի 3-ին Վաշինգտոնում կայացած մի շարք վերլուծական կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ Իրանի միջուկային հիմնախնդրին նվիրված քննարկումներում: Օրինակ, ՄԱԿ ԱԽ-ում նախկին դեսպան Ջ.Բոլթոնը հայտարարեց. «Պատժամիջոցների և բանակցությունների ժամանակն անցել է: Միակ բանը, որ մեզ մնում է՝ ռազմական հարվածն է»: Ըստ Բոլթոնի, այն պետք է իրականացվի մինչև հունվարի 20-ը, քանի դեռ նախագահի պաշտոնը չի ստանձնել Բ.Օբաման:

Միևնույն ժամանակ, նոյեմբերի վերջին երկու ազդեցիկ ամերիկյան «ուղեղային կենտրոններ»՝ Բրուքինգսի ինստիտուտը և Միջազգային հարաբերությունների խորհուրդը, հանրությանը ներկայացրին Ս.Թեյթթի և Ռ.Հասսի համատեղ ղեկավարությամբ աշխատող փորձագետների պատրաստած «Վերականգնելով հավասարակշռությունը. հաջորդ նախագահի ռազմավարությունը Մերձավոր Արևելքում» զեկույցը: ԱՄՆ հաջորդ նախագահին առաջարկվում է Իրանի հետ հարաբերությունները կառուցել այն սկզբունքով, որը Ռ.Նիքսոնը կիրառեց Չինաստանի նկատմամբ. ճանաչել Իրանի առաջատար դերը, կարգավորել հարաբերությունները և համատեղ պայքարել ընդհանուր սպառնալիքների դեմ: Չեկույցից պարզ չէ, սակայն, թե ինչպես պետք է լուծվի իրանական միջուկային ծրագրի հիմնախնդիրը:

Վասկաձեյի է թվում, որ Վաշինգտոնի հետ հարաբերությունների կարգավորման դեպքում անգամ Իրանը հրաժարվի միջուկային զենքի ստեղծման ծրագրերից: Մանավանդ հաշվի առնելով այն բացասական զարգացումները, որոնք տեղ են գտել հարևան Պակիստանում: Այս երկրում իշխանությունը զավթելու մեծ հնարավորություններ ունեն ծայրահեղական իսլամիստները, որոնց գաղափարախոսության հիմնական մասերից է շիականության դեմ պայքարը: Պետական համակարգի կիսախարխուլ պայմաններում ծայրահեղականների հաղթանակը Պակիստանում առավել քան հնարավոր է, իսկ սա նշանակում է, որ միջուկային զենքի ստեղծումն Իրանի համար առավել քան ակտուալ է: Առանց նման զենքի առկայության անհնար է պահպանել հավասարակշռությունը Պակիստանի հետ:

Իրանի միջուկային հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ որոշակի ճգնաժամ է ապրում նաև ԱԷՄԳ քաղաքականությունը: Դեկտեմբերի 8-ին ԱԷՄԳ գլխավոր քարտուղար Մ. Էլ-Բարադեյը «Los Angeles Times» թերթին տված հարցազրույցում Իրանի միջուկային հիմնախնդրի շուրջ ընթացող գործընթացների վերաբերյալ նշեց. «Մեր քաղաքականությունը ձախողվել է: Մենք անգամ մեկ սանտիմետր առաջ չենք գնացել հարցի կարգավորման ուղղությամբ»: Ներկայումս, ըստ Էլ-Բարադեյի, շատ բան կախված է նրանից, թե արդյոք Վաշինգտոնը կգնա ուղղակի բանակցությունների Թեհրանի հետ, թե ոչ:

Ամենայն հավանականությամբ, հիմնախնդրի կարգավորման շուրջ գործընթացները կակտիվանան միայն Բ.Օբամայի՝ նախագահական լիազորություններն ստանձնելուց հետո:

Ներքին զարգացումներ

Միջազգային ֆինանսական ճգնաժամն իր ազդեցությունը կունենա նաև կես տարի հետո Իրանում անցկացվելիք նախագահական ընտրությունների վրա: Սոցիալական ոլորտում սպասվող խնդիրները, որոնք անպայմանորեն կառաջանան նավթի գների անկման հետևանքով կրճատվող պետական եկամուտների պատճառով, կարող են լուրջ հարված հասցնել գործող նախագահ Մ.Ահմադինեժադի հեղինակությանը հասարակության շրջանում: Նշենք, որ չնայած լուրջ ֆինանսական հիմնախնդիրներին, Մ.Ահմադինեժադի տնտեսական և սոցիալական ծրագրերը գալիք տարվա համար բավական խոշոր են և մեծ գումարներ են պահանջում:

Բյուջեի քննարկումներն Իրանի խորհրդարանում, որոնք կավարտվեն մինչև հունվարի վերջը, կարող են լուրջ հակասություններ ստեղծել նախագահի և քաղաքական, հոգևոր շրջանակների միջև: Քիչ չեն կարծիքներն այն մասին, թե նախագահի ծրագրերի զգալի մասը պոպուլիստական է և ուղղված կարճաժամկետ հեռանկարում հասարակության շրջանում Մ.Ահմադինեժադի դիրքերի պահպանմանը: Իր հերթին, նախկին նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանին, որը ղեկավարում է Ընդունվող որոշումների նպատակահարմարության խորհուրդը, կոչ է արել խորհրդարանին մանրակրկիտ գնել ներկայացված ծրագրերը, քանի որ դրանք ընդունելը կամ չընդունելը երկրի համար հղի է լուրջ տնտեսական հետևանքներով: Հաշեմի-Ռաֆսանջանիի կոչը վերաբերում էր ոչ միայն բյուջեի վերջնական քննարկումներին, այլև մեկ այլ խոշոր նախագծի, որը ցանկանում է իրականացնել կառավարությունը: Այն վերաբերում է պետական արդյունաբերական հզորությունների մասնավորեցմանը, որի անհրաժեշտության մասին բազմիցս հայտարարել է գործող նախագահը: Մասնավորեցման գործընթացն իր հերթին նոր հակասություններ է ստեղծում իշխանական համակարգի տարբեր թևերի միջև և հիմք ստեղծում քաղաքական պայքարի հետագա թեժացման համար:

Կարելի է սպասել, որ առաջիկա մեկ-երկու ամիսներին ներքաղաքական զարգացումներն Իրանում ակնհայտորեն նոր թափ կստանան, ինչն անմիջականորեն կազդի գալիք նախագահական ընտրությունների վրա:

Սևակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆՆ ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ՀԵՏ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

Դեկտեմբերի 14-ին Թուրքմենստանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Իրադարձությունն ուշադրություն գրավեց ոչ այն պատճառով, որ հնարավոր էր համարվում անակնկալ ինչ-որ զարգացում: Աչքի զարնեց այն հանգամանքը, որ Թուրքմենստանի անկախությունից ի վեր առաջին անգամ պաշտոնակյան Ազգաբաղը որոշեց հրավիրել արևմտյան դիտորդների: Անշուշտ, Բերդիմուհամեդովի վարչակազմի այդ քայլը նշան է, թե Ազգաբաղում ցանկանում են մոտենալ ԱՄՆ-ին ու ԵՄ-ին, սակայն եթե հաշվի առնենք, որ 1. դիտորդներին ուղղված հրավերը Թուրքմենստանի նախագահի կողմից հնչեցվել է նոյեմբերի 14-ին Գերմանիայի կանցլեր Մերկելի հետ բանակցություններից անմիջապես հետո, 2. այդ բանակցություններում գլխավոր կետը վերաբերում էր թուրքմենական գազին, ապա ավելի հավանական է ներկայանում այն տարբերակը, որ բեռլինյան բանակցություններում, այնուամենայնիվ, ինչ-որ արդյունք գրանցվել է:

Հստակ է մի բան՝ այսօր թուրքմենական գործող վարչակազմը Արևմուտքին մոտեցնող միակ միջոցը կարող են լինել էներգետիկ պայմանավորվածությունները:

Իրավիճակային վերլուծություն

Նոյեմբերի 14-ին Նիցցում կայացած Եվրամիություն-Ռուսաստան գազաթափուկի նախօրեին Եվրոպական միության գործադիր բարձրագույն մարմինը՝ Եվրահանձնաժողովը, հրապարակեց Միության էներգետիկ ռազմավարությանն առնչվող փաստաթուղթ՝ «*Energy Security and Solidarity Action Plan*» («Էներգետիկ անվտանգության և համերաշխության գործողությունների ծրագիր»): Համաձայն այդ փաստաթղթի՝ ներկայում Եվրամիությունը ներկրում է բնական գազի իր պահանջարկի 61%-ը, ընդ որում՝ ներկրված կապույտ վառելիքի 42%-ը, նավթի մոտ 35%-ը և ածխի շուրջ 25%-ը գալիս է Ռուսաստանից:

Սակայն էլ ավելի կարևոր է ներկայացված դինամիկան, համաձայն որի՝ 2030թ. Եվրամիությունը ներկրելու է բնական գազի պահանջարկի 84%-ը: Ըստ նույն փաստաթղթի՝ նման հեռանկարի պայմաններում սեփական էներգետիկ անվտանգությունն ուժեղացնելու համար Բրյուսելը պատրաստվում է 2020-2050թթ. ընթացքում ծախսել հսկայական գումար՝ €2 տրլն: Ի շարքս այլ նախաձեռնությունների՝ Եվրոպական միությունը մտադիր է իրականացնել «*The Southern Gas Corridor*» («Հարավային գազային միջանցք») նախագիծը¹, իսկ արդեն 2009թ. հիմնել «*Caspian Development Corporation*» ընկերությունը, որը, միավորելով Եվրոպական խոշորագույն հինգ կամ վեց ընկերություններ, պետք է Կասպյան ավազանից գնի, տեղափոխի ու Եվրոպական շուկայում վաճառի տարեկան 60 մլրդ մ³-ից մինչև 120 մլրդ մ³ բնական գազ կամ ԵՄ ներկայիս պահանջարկի 12%-ից 25%-ը:

Անշուշտ, գոյություն ունի նաև հարցի այլ կողմը: Փաստն այն է, որ Եվրոպական միության համար դժվար է իրականացնել միասնական էներգետիկ ռազմավարություն: Ռուսաստանը Գերմանիային կապող «*Nord Stream*» գազամուղի շուրջ առկա տարաձայնությունները դրա վառ օրինակն են: Մյուս կողմից, Միության միասնական արտաքին ու անվտանգության քաղաքականության (*Common Foreign and Security Policy/CFSP*) փաստացի բացակայությունն էական խոչընդոտ է հանդիսանում, առանց որի բավական բարդ է պատկերացնել ԵՄ միաս-

¹ Նշված նախագծի շրջանակներում պետք է ներառվի նաև «*Nabucco*» գազամուղի կառուցումը, որի շինարարության սկիզբը 2009-ից տեղափոխվել է 2010թ.՝ կապված միջազգային ֆինանսական ճգնաժամի հետ, և որը վերջնականապես պատրաստ պետք է լինի 2018թ.՝ Իրանից ու Կասպիցից Եվրոպա տեղափոխելով տարեկան մինչև 31 մլրդ մ³ բնական գազ:

նական էներգետիկ ռազմավարության կենսագործումը: Սակայն արդեն այսօր գոյություն ունեն առնվազն երկու գործոններ, որոնք ի վիճակի են հիմք ստեղծել ԵՄ էներգետիկ ռազմավարության իրականացման համար՝

- Չնայած միջազգային ֆինանսական ճգնաժամի հետևանքով նավթի գները շարունակում են անկում ապրել, սակայն պարզ է, որ ավելի երկարատև հեռանկարում էներգակիրների գները միայն աճելու են, այդ թվում՝ կապված մոլորակում նավթի ու բնական գազի պաշարների սպառման հետ: Բացի այդ, արևմտյան գրեթե բոլոր առաջատար հետազոտական կենտրոնների գնահատականների համաձայն՝ աշխարհի զարգացած տնտեսությունները դժվար թե հասցնեն տեխնոլոգիական այնպիսի թռիչք կատարել, որ մինչև 2025-2030թթ. ի վիճակի լինեն գոնե էապես կրճատել սեփական տնտեսությունների կախվածությունը նավթից, բնական գազից և ածուխից:
- Հաջորդ կարևոր գործոնը բնական գազի միջազգային շուկայում կարտելային այնպիսի միության ի հայտ գալու հավանականությունն է, որը կարող է միայնակ ձևավորել բնական գազի միջազգային գինը: Եթե իրականությանը համապատասխանում է այն նորությունը, ըստ որի՝ դեկտեմբերի 23-ին Մոսկվայում Ռուսաստանի, Իրանի, Կատարի¹ ու չի բացառվում նաև բնական գազ արդյունահանող այլ պետությունների մասնակցությամբ պետք է հիմնվի «գազային OPEC»-ը, և եթե այդ միության անդամ երկրները կարողանան փոխհամաձայնության գալ կապույտ վառելիքի միջազգային գնի ձևավորման մեխանիզմի շուրջ, ապա գազի միջազգային շուկայում մենք կունենանք սկզբունքային այլ իրավիճակ²:

Այս պայմաններում է, որ վերջին շրջանում թուրքմենական գազի շուրջ տեղի են ունենում բավական ուշագրավ զարգացումներ:

Արդեն ներկայացրել ենք, որ հոկտեմբերի 14-ին բրիտանական «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերությունը հրապարակեց թուրքմենական բնական գազի հանքերի՝ իր կողմից իրականացված աուդիտի արդյունքները³: Համաձայն այդ հրապարակման՝ միայն «Յուրտան-Օսման» գազահանքի պաշարները գնահատվեցին 5 տրլն մ³-ից մինչև 17.5 տրլն մ³, իսկ Թուրքմենստանի բնական գազի ընդհանուր պաշարները գնահատվեցին ավելի քան 27.67 տրլն մ³: Եթե բրիտանական այդ ընկերության ներկայացրած տվյալները համապատասխանում են իրականությանը, ապա Թուրքմենստանը դառնում է աշխարհում բնական գազի ամենամեծ պաշարներն ունեցող երկրորդ երկիրը՝ Ռուսաստանից հետո:

Բնական գազի ամենամեծ պաշարներն ունեցող առաջին հինգ երկրները ⁴			
№	երկիր	պաշարները տրլն մ ³	չափաբաժինը (%) մոլորակի ընդհանուր պաշարների մեջ
1.	Ռուսաստան	44.60	22.07%
2.	Թուրքմենստան	27.67	13.69%
3.	Իրան	27.58	13.65%
4.	Կատար	25.64	12.69%
5.	Սաուդյան Արաբիա	7.07	3.50%

¹ «BP Statistical Review of World Energy, June 2008» զեկույցի համաձայն՝ այսօր նշված երեք երկրները տիրապետում են աշխարհի բնական գազի պաշարների ավելի քան 55%-ին:

² Այն, որ «գազային OPEC»-ի շուրջ ընթացող գործընթացները կրում են լուրջ բնույթ կամ գոնե այդպես են ընկալվում Եվրամիությունում, վկայում է «The Financial Times Deutschland»-ի նոյեմբերի 16-ի հրապարակումը, ըստ որի՝ գազի ոլորտի եվրոպական խոշորագույն ընկերություններից «E.ON»-ը, «Gaz de France»-ը և «RWE»-ն պատրաստվում են կազմել բնական գազի գնորդների կարտել՝ ի պատասխան Ռուսաստանի, Իրանի, Կատարի կողմից «գազային OPEC»-ի ստեղծման ծրագրի:

³ Թուրքմենստանում միջազգային որևէ ընկերության կողմից նման աուդիտ չէր անցկացվել Ազգաբաղի անկախանալուց ի վեր:

⁴ Տվյալները ներկայացված են՝ հիմք ընդունելով «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերության նշված հրապարակումը և «British Petroleum» ընկերության կողմից պատրաստված «BP Statistical Review of World Energy, June 2008» զեկույցը:

Այդ հրապարակումից ուղիղ մեկ ամիս անց՝ նոյեմբերի 14-ին, Բեռլինում տեղի ունեցան Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի և Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի բանակցությունները: Բանակցությունների արդյունքների հայտնի մասն այն է, որ թուրքմեն առաջնորդը խոստացավ Մերկելին պաշտոնապես հաստատել «*Gaffney, Cline & Associates Ltd.*»-ի հրապարակած տվյալները:

Դեկտեմբերի 2-ին Եվրահանձնաժողովը սկսեց Թուրքմենստանի հետ առևտրային ժամանակավոր պայմանագրի ստորագրումը նախապատրաստող գործընթացը, ինչը հնարավորություն կտա Ազգաբաղի հետ պայմանավորվել այդ թվում էներգետիկ ոլորտում: Ուշագրավ է, որ տարիներ շարունակ Եվրոպական միությունը ձեռնպահ էր մնում այդ քայլից՝ պատճառաբանելով, թե Թուրքմենստանում ոտնահարվում են մարդու իրավունքները:

Եվ վերջապես, պետք է նույն տրամաբանության ներքո դասել նոյեմբերի 29-ին Թուրքմենբաշի նավահանգստային քաղաքում տեղի ունեցած Բերդիմուհամեդովի և Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը: Թեև բանակցությունների օրակարգի և արդյունքների մասին պաշտոնական որևէ լուրջ հրապարակում չէր, սակայն առանձնապես չքաքցվեց էլ, որ քննարկված հիմնական կետը վերաբերել է անդրկասպյան գազամուղի կառուցմանը, որն Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի տարածքով թուրքմենական գազը պետք է հասցնի Եվրոպա: Մյուս կողմից, նման մակարդակով բանակցությունների անցկացման փաստը վկայում է, որ այդ գաղափարը գոնե նախնական հավանության է արժանացել երեք նախագահների կողմից:

Հետևություններ

Անշուշտ, ներկայացվածը չի կարող միանշանակ հետևության հիմք հանդիսանալ, թե Եվրամիության կամ Միացյալ Նահանգների ու Ազգաբաղի միջև գազային ոլորտում ռազմավարական նշանակության պայմանավորվածություն է հասունացել: Բայց արդեն այսօր հստակ է երեք կետ՝

- Միջազգային պրակտիկայում գազահանքերի աուդիտը (հատկապես՝ նման խոշոր աուդիտը) միշտ էլ նախորդել է պայմանագրերի կնքմանը: Այլ հարց է աուդիտի արդյունքների հրապարակման և պայմանագրերի կնքման ժամանակահատվածը:
- Նման քանակությամբ բնական գազի պաշարների մասին հրապարակումը նաև յուրահատուկ մեսիջ է Մոսկվային, թե Ազգաբաղն ունի ավելի շատ կապույտ վառելիք, քան պարտավոր է վաճառել «Газпром»-ին: Այսինքն՝ ռուսական կողմի համար անակնկալ չպետք է լինի, եթե Թուրքմենստանը որոշի իր բնական գազը միջազգային շուկա արտահանել նաև այլ ուղիներով:
- Իսկ եթե դա այդպես է, ապա ավելի հավանական է, որ նորություններ մենք կլսենք հենց արևմտյան ուղղությունից: Որ այդ նորությունները դժվար թե առնչվեն չինական ուղղությանը, վկայում է այն հանգամանքը, որ Կենտրոնական Ասիան Չինաստանին կապող նավթամուղի ու գազամուղի շինարարություններն ավարտական փուլում են: Հետևաբար, միակ տարբերակը մնում է արևմտյան ուղղությունը:

***Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ***

БАКИНСКИЙ ЭНЕРГОСАММИТ И ЭНЕРГЕТИЧЕСКАЯ ГЕОПОЛИТИКА ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА

Продолжается геополитическая борьба за вывод каспийских энергоресурсов в обход России на мировые рынки за счет создания «альтернативных» трубопроводов – как средство снижения российского энергетического и политического влияния в среднеазиатском и каспийском регионах и уменьшения энергетической (а отсюда и политической) зависимости от РФ стран Западной СНГ и Восточной Европы.

Одним из наиболее «громких» событий в этой связи стало проведение 14 ноября Бакинского саммита по энергетической безопасности (официально – Энергетический саммит) – уже четвертого подобного мероприятия за 2 года. Участие в работе саммита приняли все давние адепты концепции диверсификации энергопотоков и снижения российского энергетического влияния на западе Евразии: Азербайджан и Казахстан (страны-экспортеры углеводородов), Грузия и Турция (страны-транзитеры), Латвия, Литва, Эстония, Польша, Румыния, Украина, а также США (на уровне министра энергетики США Самюэла Бодмана) и Еврокомиссия (основные проповедники идей энергобезопасности), Болгария, Венгрия, Греция, Италия, Швейцария (условно – «сочувствующие»). По итогам встречи основные «действующие лица» – президенты Азербайджана, Турции, Грузии, Литвы, Украины и Польши – подписали Бакинскую декларацию, в которой подтвердили обязательства по дальнейшей реализации и сотрудничеству по «альтернативным» проектам, которые обсуждались во время саммита.

По большому счету, работа саммита была сосредоточена на обсуждении проекта создания так называемого Евро-Азиатского нефтетранспортного коридора (ЕАНТК) – системы поставок нефти из Азербайджана и Казахстана (через Каспий в Баку) по трубопроводу Баку-Супса в Одессу морем и далее до польского Гданьска (продление существующего нефтепровода Одесса-Броды до польского Плоцка, где расположен нефтеперерабатывающий завод, и польского же порта Гданьск) с перспективой поставок «черного золота» в страны Балтии, возможно ФРГ и ряд иных государств морем, а также в Чехию и Словакию из Польши. Этот проект изначально обсуждался еще в рамках сообщества ГУАМ, а теперь рассматривается как ключевой для снижения «нефтяного монополизма» Москвы новым неформальным «энергетическим альянсом» в составе Польши, Грузии, Украины и стран Балтии при поддержке США и ЕС. На протяжении последних лет вопрос о ЕАНТК постоянно поднимается странами-участницами энергетических саммитов и европейскими чиновниками, грезящими о снижении энергетической зависимости от Москвы, но теперь стороны явно решили приложить более существенные усилия. Прежде всего, стало известно, что близка к завершению разработка технико-экономического обоснования (ТЭО) проекта, которая осуществляется при поддержке ЕС. Причем, судя по словам азербайджанского президента Ильхама Алиева, до конца 2008г. оно имеет шанс увидеть свет, что ясно указывает, что стороны торопятся с началом реализации проекта.

Начался процесс создания условий для практических шагов. Ранее одной из основных проблем являлось то, что страны-экспортеры отказывались гарантировать поставки нефти без обязательств по строительству самого нефтепровода, а потенциальные страны-импортеры отказывались вкладываться в проект без обязательств поставки нефти. Наконец, сам «ключевой» участок Одесса-Броды работал в реверсном режиме, качая российскую нефть в Одессу на экспорт. Теперь сделаны усилия к тому, чтобы разрубить этот «гордиев узел». Еще в период подготовки к саммиту, в начале ноября, стало известно, что Евросоюз готов профинансировать достройку участка от Брод до Плоцка и Гданьска (500 км). Таким образом, снимается ключевое противоречие, способное сдвинуть проект с мертвой точки. Далее, президент Ющенко все более активно и агрессивно лоббирует в пользу аверса трубопровода «Одесса-Броды» и хотя Юлия Тимошенко, пытающаяся улучшить отношения с Москвой и российскими корпорация-

ми, пока сопротивляется этому решению, давление растёт, и, скорее всего, премьер в ходе очередных тактических «разменов» уступит по этому вопросу. В свете этих решений увеличилась «обработка» Казахстана со стороны стран, заинтересованных в проекте. Не секрет, что Азербайджан технически не сможет предоставить необходимые объёмы нефти для ЕАНТК (в перспективе – до 50 млн т в год, как Баку-Тбилиси-Джейхан), и основные надежды стран, отстаивающих «альтернативные» пути, связаны именно с Астаной.

Казалось бы, проект не просто получил новую жизнь, он наконец наполняется реальным содержанием, что представляет реальную угрозу российским интересам. Однако при ближайшем рассмотрении вырисовывается иная картина.

Во-первых, что самое важное, при всем заявленном энтузиазме (а Казахстан даже заявил, что может принять участие в софинансировании ЕАНТК), ни Баку, ни Астана не подписали ни одного документа, четко фиксирующего их конкретные обязательства по поставкам определенных объёмов нефти в будущем по ЕАНТК. Причем с политико-дипломатической точки зрения в этом контексте показательно, что Казахстан, основной ожидаемый источник «черного золота» для ЕАНТК, был представлен не президентом Н.Назарбаевым или даже премьер-министром, но министром энергетики и минеральных ресурсов Сауатом Мынбаевым. Понятно, что все это равносильно заявлению о необходимости как минимум дополнительных расчетов. Причины этого очевидны: у Казахстана и Азербайджана просто нет необходимой «свободной» нефти, так как вся она идет или через Баку-Тбилиси-Джейхан, или через российский КТК (ожидается расширение), или же в КНР (нефтепровод Атасу-Алашанькоу, который также, как ожидается, будет расширен), и в контексте существующих планов она вряд ли появится в ближайшие годы в достаточном количестве. Спорна и экономическая выгодность ЕАНТК по сравнению с другими маршрутами. Неудивительно, что С.Мынбаев весьма недвусмысленно заявил, что хотя ЕАНТК интересен Казахстану, БТД остается одним из основных приоритетов для Астаны в качестве маршрута экспорта нефти на мировые рынки. Конечно, как дополнительный вариант этот маршрут все равно может быть востребован, но пока вероятность того, что Баку и Астана найдут необходимые 35 млн т нефти в год (существующая мощность систем Одесса-Броды) и направят их именно по ЕАНТК, невелика.

Во-вторых, мировой финансовый кризис и падение цен на нефть явно не способствуют улучшению перспектив проекта: в случае рецессии все игроки воздержатся от новых крупных инвестиций при эффективности необходимых маршрутов, да и каков будет платежеспособный спрос на «альтернативную» нефть пока неясно.

Другой вопрос, что проблема ЕАНТК активно используется рядом стран и политических сил для своих вполне политических интересов. Так, президент Ющенко использует тему трубопровода Одесса-Броды в своей борьбе с Ю.Тимошенко, Украина в целом добивается «под проект» финансовой помощи ЕС и США. Не говоря о постоянной «обработке» ЕС, показательно, что в ходе переговоров в Баку Ющенко прямо попросил у главы Минэнерго США С.Бодмана поспособствовать американским инвестициям в украинскую ядерную энергетику, добычу нефти и газа в стране, альтернативную энергетику, обеспечить политическую и бизнес-поддержку США для реализации проекта Одесса-Броды-Плоцк-Гданьск. Азербайджан и особенно Казахстан прямо используют диалог для того, чтобы укрепить свое энергогеополитическое значение и влияние в ЕС и в СНГ. Неудивительно, что, например, Казахстан в ноябре оставался местом «паломничества» различных делегаций: так, прошли заседания межправительственной казахстанско-финской комиссии по торгово-экономическому сотрудничеству, аналогичной казахстанско-украинской межгосударственной комиссии, состоялся государственный визит президента Словацкой Республики в Казахстан, по экономическому сотрудничеству, прошли телефонные переговоры Н.Назарбаева с избранным президентом США Бараком Обамой.

Иными словами, как уже подчеркивалось ЦПИ, на данный момент России не так надо опасаться экономических и энергетических последствий проекта, который и сам по себе все еще находится по большому счету в зоне неопределенности с точки зрения долгосрочной перспективы, в частности роста влияния Казахстана как де-факто альтернативы РФ (тем более что

Астана умело дезавуирует опасения России), а также укрепления влияния США и ЕС и формирования своего рода антироссийского дипломатического формата в регионе, поддерживающего и укрепляющего антироссийские мотивы в политике стран, расположенных на «дуге» от Каспийского до Балтийского морей.

Неудивительно, что при всем триумфализме относительно саммита, основные усилия в сфере создания альтернативных маршрутов по поставкам каспийских углеводородов в ЕС США и сам Евросоюз продолжали прилагать к лоббированию проекта газопровода «Набукко». Проект обсуждался в ходе визита 6 ноября в Баку еврокомиссара по энергетическим вопросам Андрииса Пиебалгса, стрессировался помощником заместителя госсекретаря США Мэтью Брайзой (кстати, сопредседатель Минской группы ОБСЕ по урегулированию карабахского конфликта) и самим министром энергетики США С.Бодманом. Последний не только уделял основное внимание как раз системам по экспорту газа в ЕС из Азербайджана и Туркменистана, но даже призвал производителей и потребителей природного газа подготовить и подписать соответствующее рамочное соглашение (деликатный эвфемизм, обозначающий соответствующие лоббистские усилия США). Впрочем, и этот проект остается пока столь же виртуальным, как и ЕАНТК, – из-за политико-дипломатической невозможности и крайней дороговизны прокладки Транскаспийского газопровода (ключевого для «Набукко»), неопределенности позиций игроков из-за финансового кризиса и ряда иных моментов.

На фоне громко прозвучавших итогов Бакинского саммита, которые дополнительно были «растиражированы» американской стороной, и «газового лоббизма» США и ЕС относительно малозамеченным остался факт, действительно значимый для политики диверсификации нефтеэкспорта из каспийского региона. Речь идет о запуске 3 ноября системы экспорта казахстанской нефти по Каспию в Баку с дальнейшей ее транспортировкой на рынки по трубопроводу Баку-Тбилиси-Джейхан. Фактически, началась новая эпоха экспорта среднеазиатской нефти на мировые рынки, так как страны региона получили первый альтернативный маршрут на Запад. Причем прилагаются дальнейшие усилия по диверсификации экспортных возможностей Астаны. Так, 31 октября в ходе визита в КНР премьер-министра Казахстана Карима Масимова и его переговоров с премьером Госсовета КНР Вэнь Цзябао Казахстан и Китай договорились об укреплении сотрудничества в области добычи и транспортировки углеводородов, было подписано рамочное соглашение о расширении сотрудничества между «КазМунайГазом» и Китайской национальной нефтегазовой корпорацией.

Фактически, в случае БТД уже создан материальный канал укрепления диалога и взаимного международно-политического и экономического влияния стран Запада и Казахстана, а в отношении Китая создается дополнительный рычаг диалога, что в совокупности приведет к дальнейшему и серьезному ослаблению пока все еще прочной «привязки» Астаны к политике Москвы. Это, конечно, не означает, что Казахстан немедленно изменит свою линию относительно РФ, однако теперь у него существует возможность гораздо большей гибкости в осуществлении своей политики. Иными словами, теперь в политическом и экономическом торге с Москвой у Астаны появляются новые козыри, к тому же Астана явно сможет более эффективно проецировать свое влияние на страны СНГ как более лояльная энергетическая альтернатива РФ.

Сергей Гриняев
Руководитель аналитического департамента фондовой биржи РТС
Специально для фонда «Нораванк»

ТЕМПЫ РАСПРОСТРАНЕНИЯ «МИРНОГО АТОМА» БУДУТ РАСТИ

Мировой рынок атомной энергетики переживает свой бум. Причин этому множество. К текущим причинам заинтересованности многих стран в создании на своей территории мощностей производства атомной энергетики следует отнести, помимо прочего, наращивание неблагоприятных последствий мирового экономического спада и финансового кризиса.

Казалось бы, низкие цены на нефть должны были привести к обратному процессу, выражающемуся, как минимум, в ограничении и замедлении атомно-энергетических претензий новичков и кандидатов в мировой клуб обладателей ядерных мощностей. Однако последние развития на рынке «мирного атома» свидетельствуют, что государства скорее стремятся усмотреть в этом иной смысл и заявить о своих атомных энергетических амбициях в тот момент, когда мировые цены снижаются в том числе и на все строительно-технологические процессы, связанные с постройкой атомных электростанций.

Более стратегический взгляд на нынешнюю ситуацию на мировых экономических рынках показывает, что вложения в сектор развития атомных мощностей могут дать многим странам дополнительные стимулы для развития собственной экономики и удержания ее на устойчивых позициях в условиях всеобщего экономического спада и финансового кризиса. Это и создание новых рабочих мест, и новые привлечения инвестиций в такой сектор экономики, который обеспечивается государственными финансовыми гарантиями, а потому весьма привлекателен для международных инвесторов в нынешнее время экономической нестабильности и высокого риска потери финансовых активов¹.

Высокие риски на международной арене наблюдаются не только в сфере мировой экономики. Множество факторов свидетельствует о не менее значимых международных и региональных рисках политического характера, вызванных, в первую очередь, нарастанием в глобальном и региональном масштабах конфронтационных элементов в отношениях между, соответственно, крупнейшими мировыми державами и ключевыми странами наиболее «горячих» регионов мира. Нетрудно заметить, что актуальность и востребованность развития атомных мощностей во многом задается в таких регионах значительной межгосударственной конфронтации, какими выступают, например, Восточная Европа и Персидский залив.

¹ Как отмечают специалисты, в строительстве атомных станций 50% – это строительство, 30% – оборудование, 15% – инжиниринг и 5% – прочие расходы. Таким образом, основной сегмент затрат при строительстве атомной электростанции формируется по части непосредственного строительства, а значит данный сегмент выражается для страны, где осуществляется постройка станции, в привлечении собственной рабочей силы, создания или развития вокруг объекта строительства соответствующей инфраструктуры и т.п. Также отмечается, что главная угроза финансового кризиса – дефицит средств. Однако при этом всегда существует потребность в энергетике. При энергодефиците деньги все равно будут найдены. Другой вопрос, что они могут быть найдены для другого источника энергии. Но здесь в отношении атомной энергетики можно быть абсолютно спокойным: атомные станции будут строиться, потому что они в общей структуре энергоисточников имеют самые низкие тарифы. Если при финансовом кризисе половина предприятий будет закрыта, то, соответственно, и многие энергоисточники не будут действовать. Но даже при таком сценарии развития атомные станции прекратят работу в самом конце, поскольку сначала будут закрывать газовые станции, затем угольные и только после этого атомные энергоисточники. Это связано с тем, что затраты на угольной станции и атомной примерно одинаковы, но атомная станция работает 60 лет, а угольная – 25, и поэтому у атомной станции инвестиционная привлекательность выше. (Мухтар Джакишев, Мировой финансовый кризис не отразится на атомной энергетике – глава НАК «Казатомпром», <http://www.inform.kz/index.php?lang=rus&select=archive§ion=559>, 10.11.2008).

О своих атомных амбициях мирного характера успели заявить такие страны, как Польша и Белоруссия¹.

1 декабря 2008г. премьер-министр Польши Д.Туск заявил, что его страна хочет построить первую атомную электростанцию на своей территории к 2020г. Мотивировка строительства атомной станции главой правительства Польши была обозначена с упоминанием дешевизны получаемой таким образом электроэнергетики и экологической чистоты атомного производства электроэнергии. Д.Туск подчеркнул, что Польша намерена в кратчайшие сроки принять соответствующее решение о строительстве АЭС.

Интересен сам факт отсутствия до сих пор на территории такой крупной и населенной страны Восточной Европы, какой является Польша, атомной электростанции. По всей видимости, еще в бытность социалистического лагеря в Восточной Европе сказывались внешнеполитические предпочтения лидера этого лагеря в лице СССР, в основании которых лежали исторические параллели между нюансами отношений России, например, с такими странами, как Болгария и Польша. Менее крупные и менее населенные страны Восточной Европы, вступившие в Европейский союз в 2004 и 2007 гг., обладали собственными атомными мощностями электроэнергетики. Польша же оказалась за бортом мирового клуба «мирного атома» и сейчас пытается исправить эту «несправедливость». Особая заинтересованность Польши в развитии собственной атомной энергетической программы обуславливается тем, что Польша в настоящее время получает 94% своей энергии от электростанций, работающих на угле², и находится в зоне потенциальных интересов российского топливно-энергетического комплекса.

Если политическая конфронтация в Восточной Европе, представленная на нынешнем этапе расхождением таких векторов международной политики, как «атлантизм» и «Россия», все же не выходит за рамки поддержания региональной стабильности на минимально необходимом уровне, то соответствующие риски качественной дестабилизации в других регионах повышенного внимания к развитию атомных энергетических мощностей на порядок выше. В этой связи уже стала классической проблема атомной программы Ирана, развивающейся под пристальным вниманием международного сообщества в регионе высоких политических рисков.

Международная ситуация вокруг атомной программы Ирана не может не беспокоить сам Иран. Последний ищет адекватные пути нейтрализации повышенного внимания к себе со стороны таких стран, как США и Израиль, и создания условий для направления этого внимания в безопасное для себя русло. Одним из последних свидетельств этому стала инициатива Ирана по созданию регионального атомного консорциума с арабскими странами Персидского залива.

30 ноября 2008г. устами главы Организации по атомной энергии Ирана Г.Р. Агазаде ИРИ предложила совместное сотрудничество арабским странам Залива, у которых есть или могут быть опасения по поводу атомной программы Ирана в сфере производства атомной электроэнергии. Предложение Ирана направлено на совмещение усилий стран Залива в строительстве и эксплуатации атомных станций региона в рамках соответствующей многосторонней структуры – консорциума.

Со стороны официального лица Ирана было подчеркнуто, что это предложение носит общий и предварительный характер. Если в связи с ним будет получено принципиальное согласие арабских стран Залива, то Иран готов приступить к совместному обсуждению деталей проекта.

Для полного представления целей этого предложения со стороны Ирана необходимо учитывать тот факт, что о своих амбициях по созданию собственных атомных энергетических мощностей заявила и Сирия – также арабская страна, но расположенная не в регионе Персид-

¹ В Белоруссии обсуждения вокруг вопроса постройки на своей территории атомной станции ведутся уже несколько лет. Здесь планируется строительство станции мощностью 2 тыс. МВт с вводом первого энергоблока в 2016г., второго – в 2018г. Для размещения станции рассматриваются три потенциальные площадки: Островецкая в Гродненской области, Кукушинская и Краснополянская в Могилевской области.

² *Poland aims for nuclear power plant by 2020: PM*, <http://www.spacedaily.com/2006/081201152225.ps56qkpm.html>. 1.12.2008.

ского залива и не имеющая с Ираном каких-либо внешнеполитических противоречий. Очевидно, что атомные планы развития энергетики Сирии не могут не перекрещиваться с подобными планами Ирана, и последний старается проводить взвешенную и сбалансированную политику на этом направлении, не осложняя и без того натянутые отношения с арабскими странам Персидского залива.

В связи с изложенным можно сделать следующий вывод. Широкому географическому охвату распространения «мирного атома» и развитию этого глобального процесса придан такой темп, который в ближайшей перспективе не подвержен деструктивному влиянию со стороны общих неблагоприятных прогнозов мировой экономики. Скорее наоборот: создание и развитие собственных атомных энергетических мощностей рассматривается заинтересованными странами в качестве наиболее оптимального решения как внутриэкономических проблем и выгодного участия в возможных совместных энергетических проектах регионального характера, так и как занятие достойного места в нынешних конфронтационных условиях мировой политики и получение дополнительных гарантий в сфере обеспечения своей национальной безопасности.

Михаил Агаджанян

ԲԱՔՈՒՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐ ՍՏԱՆՁՆԵԼ ԱՐԵՎԵԼԷ-ԱՐԵՎՍՈՒՏՔ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՄԻՋԱՆՑՔՈՒՄ

Բաքվում ավարտվեց 4-րդ էներգետիկ գագաթաժողովը, որին, ինչպես սպասվում էր, պետք է հաջորդեր անդամ երկրների համատեղ համաձայնագրի ստորագրումը, սակայն այս միջոցառումը չիրականացավ:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 13-14-ին Բաքվում տեղի է ունեցել էներգետիկ գագաթաժողով, որին մասնակցում էին Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Ռումինիայի, Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Թուրքիայի, Ղազախստանի, ինչպես նաև ԱՄՆ և Եվրամիության ներկայացուցիչները: Նախատեսված էր, որ այս միջոցառումը պետք է ավարտվի, այսպես կոչված, Բաքվի էներգետիկ հռչակագրի ստորագրմամբ, ինչի շուրջ, մինչ երկրների ղեկավարների ժամանումը, պետք է համաձայնության գային էներգետիկայի նախարարները, սակայն դա տեղի չունեցավ: Հաղորդվում է, որ նախարարների հավաքից միայն կես ժամ առաջ էր ադրբեջանական կողմը ներկայացրել հռչակագրի տեքստը, որը գրված է եղել անգլերեն լեզվով, ոչ հստակ ձևակերպումներով և որտեղ, այսպես կոչված, Արևելք-Արևմուտք էներգետիկ միջանցքի հիմք է համարվում արդեն գործող Բաքու-Ջեյհան նավթամուղը և Բաքու-Էրզրում գազամուղը: Հռչակագրի մեջ ոչինչ չէր ասվում Nabucco նախագծի վերաբերյալ և թեթևակի հիշատակում կար Օդեսա-Բրոդի-Պլոցկ-Գդանսկ նավթամուղի մասին¹: Հասկանալի է, որի իրերի նման դասավորությունը չէր կարող բավարարել գագաթաժողով ժամանած մյուս պատվիրակությունների ներկայացուցիչներին, որոնք կոչ արեցին Ադրբեջանին փոփոխություն մտցնել հռչակագրում: Նշենք, որ Բաքվի հավաքում մի շարք երկրներ ներկայացված էին նախագահների մակարդակով, մասնավորապես՝ Ադրբեջան էին ժամանել Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին, Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը, Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկին, Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոն և Լիտվայի նախագահ Վալդաս Ադամկուսը: Գագաթաժողովին ներկա էին նաև Եվրամիության էներգետիկ հարցերով կոմիսար Անդրիս Պիելբազը և ԱՄՆ էներգետիկայի նախարար Սամյուել Բոդմանը: Մյուս երկրները, մասնավորապես՝ Ռումինիան, Լատվիան, Էստոնիան, Ղազախստանը և Մոլդովան, ներկայացված էին նախարարների մակարդակով: Ինչևէ, չնայած Բաքվի հավաքն այդպես էլ էական արդյունքի չհանգեցրեց, սակայն քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ԱՄՆ-ի, Եվրամիության և եվրոպական մի շարք երկրների համար առաջնայինը Nabucco ծրագիրն է, Ուկրաինայի և Լեհաստանի համար՝ Օդեսա-Գդանսկ նավթամուղը և այլն: Ելույթ ունենալով գագաթաժողովում՝ Ադրբեջանի էներգետիկայի նախարար Նաթիկ Ալիևը շեշտեց, որ Արևելք-Արևմուտք իրար կապող բոլոր ծրագրերը՝ Nabucco-ն, Սամսուն-Ջեյհանը, «Հարավային ուղին» և մյուսները, կարևոր են, քանի որ դրանք ամրացնում են այդ միջանցքը: Ն.Ալիևը նաև նշեց, որ 2008թ. Ադրբեջանում նավթի արդյունահանումը կհասնի 52 մլն տոննայի, գազինը՝ 27 մլրդ մ³-ի: Ըստ նախարարի՝ Ազերի-Չիրաք-Գյունեշլի հանքավայրում նավթի պաշարները հասնում են 935 մլն տոննայի, իսկ գազի պաշարը՝ 280 մլրդ մ³-ի³: Տեղի ունեցող քննարկումների ժամանակ հիմնական թեման Արևելք-Արևմուտք նոր էներգետիկ միջանցքի ստեղծումն էր, որը պետք է ապահովի Եվրոպան էներգետիկ նոր պաշարներով և կրճատի վերջինիս կախվածությունը ռուսական նավթից ու հատկապես գազից: Գագաթաժողովին մասնակցող ԱՄՆ էներգետիկայի նախարար Սամյուել Բոդմանը շեշտեց, որ թեև

¹ *IA REGNUM «Новости»*, Встреча министров энергетики в Баку завершилась недоразумением. www.regnum.ru/news/1083742.html 14.11.2008.

² *IA REGNUM «Новости»*, В столице Азербайджана проходит конференция министров энергетики 10 государств. www.regnum.ru/news/1083183.html 13.11.2008.

³ *IA REGNUM «Новости»*, В Баку завершилось заседание министров энергетики стран-участниц IV энергетического саммита. www.regnum.ru/news/1083541.html. 13.11.2008.

իր երկիրն ուղղակիորեն չի օգտվում այս տարածաշրջանից առաքվող էներգետիկ պաշարներից, սակայն Վաշինգտոնը շահագրգռված է, որ այս ծրագրերը գործեն, ինչը նպաստում է Եվրոպայի էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը¹: Բողմանն այս կապակցությամբ նկատել է, որ ԱՄՆ-ի համար կարևոր է տարածաշրջանում գտնվող երկրների անվտանգությունը, քանի որ այն ապահովում էր էներգետիկ հոսքերի անխափանությունը և ընդհանրապես էներգետիկ անվտանգությունն աշխարհում: Ամերիկացի նախարարի հետաքրքրությունը կարելի է հասկանալ, քանի որ նշված բոլոր ծրագրերի նպատակն է կասայան էներգետիկ հոսքերն ուղղել դեպի Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանը: Ինչևէ, տարածաշրջանից դեպի Եվրոպա գազի առաքման ամենամեծ ծրագիրը՝ *Nabucco*-ն, ինչպես և սպասվում էր, քննարկումների հիմնական թեման էր: Ելույթ ունենալով այս հարցի շուրջ՝ Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Հուլուսի Ալիջը նշեց, որ ծրագրի իրականացման համար կարևոր է Թուրքմենստանի դիրքորոշումը, և որ Եվրամիությունը ևս ակտիվություն դրսևորի *Nabucco* ծրագրի իրականացման համար²: Եվրամիությունը *Nabucco*-ն դիտարկում է որպես իր էներգետիկ անվտանգության կարևոր բաղկացուցիչ և պատրաստ է լուրջ ներդրումներ կատարել այս ծրագրի իրականացման համար: Հիշեցնենք, որ ի սկզբանե նախատեսված էր նախագիծը շահագործման հանձնել 2011թ., հետագայում այն հասցվեց մինչև 2013թ., սակայն նույնիսկ այս թվականը մասնագետներին ոչ իրական է թվում: Ինչևէ, նախագծի իրականացման համար Թուրքմենստանի մասնակցությունը կարևորվում է, ինչն էլ նախագծով հետաքրքրված երկրներին ստիպում է բանակցություններ սկսել այդ երկրի ներկա ղեկավարության հետ: Բաքվի գազաթաժողովի ավարտից հետո Թուրքմենբաշի քաղաքում սկսված Թուրքմենստանի, Ադրբեջանի և Թուրքիայի նախագահների հավաքը, ըստ շատ մասնագետների, Ադրբեջանում ավարտված գազաթաժողովի տրամաբանական շարունակությունն է և նպատակ ունի համոզել այդ երկրին միանալ անդրկասպյան գազամուղի ստեղծմանը և *Nabucco* նախագծին³: Ադրբեջանի և Թուրքիայի հետաքրքրությունը *Nabucco* ծրագրի նկատմամբ հասկանալի է. նրանք այդպիսով դառնում են դեպի Եվրոպա գազի հոսքի համար տարանցիկ երկիր, սակայն այս նախագծի իրականացումն անհնար է առանց Թուրքմենստանի մասնակցության⁴: Թուրքմենբաշի քաղաքում սկսված հավաքի նպատակը նոր գազային դաշինքի ստեղծումն է, որը պետք է երաշխիք հանդիսանա Եվրոպա գազի առաքման համար: Սակայն շատ մասնագետներ կասկածում են, որ Թուրքմենստանը կարող է նման երաշխիքներ տրամադրել՝ հիշեցնելով, որ 2007թ. հենց այստեղ, Պուտինի, Նազարբաևի և Բերդիմուհամեդովի մասնակցությամբ ստորագրվեց մերձկասպյան գազամուղի կառուցման ծրագիրը, որը, չնայած ռուսական կողմի ջանքերի, այդպես էլ իրական ուրվագծեր չի ստանում⁵: Այնպես որ, նոր ձևաչափով եռակողմ հանդիպումը Բերդիմուհամեդովի, Ալիևի և Գյուլի մասնակցությամբ ոչ մի էական տեղաշարժ չի բերի, մանավանդ որ դեռ պարզ չէ, թե ինչ պաշարներից պետք է գազ մատակարարվի հնարավոր կառուցվելիք գազամուղին, բացի այդ, մինչ օրս չկա Կասպից ծովի միջազգային կարգավիճակի մասին միջպետական պայմանագիր ծովի ավազանի երկրների միջև: Այսինքն՝ այս ամենը լուրջ խոչընդոտ են, որը գազը Թուրքմենստանից Կասպիցի հատակով հոսի դեպի Ադրբեջան և ապա դեպի Արևմուտք: Բացի դրանից, շատ մասնագետների կարծիքով, Թուրքմենստանի ներկա ղեկավարության ակտիվությունը պայմանավորված է ղեկտեմբերին Աշգաբադ «Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլլերի այցով, այսինքն՝

¹ *IA REGNUM «Новости»*, Министр энергетики США: Мы очень заинтересованы в безопасности и благополучии Азербайджана. www.regnum.ru/news/1083370.html 13.11.2008.

² *IA REGNUM «Новости»*, Посол Турции в Азербайджане: Реализация проекта Nabucco зависит от Туркменистана. www.regnum.ru/news/1082056.html 11.11.2008.

³ *IA REGNUM «Новости»*, В Красноводске завершился саммит президентов Азербайджана, Турции и Туркмении. www.regnum.ru/news/1091289.html 29.11.2008.

⁴ *IA REGNUM «Новости»*, "Главы Турции и Азербайджана будут убеждать Бердымухаммедова в необходимости присоединения к Nabucco" – мнение. www.regnum.ru/news/1091297.html 29.11.2008.

⁵ *IA REGNUM «Новости»*, Туркмения подпишет, не выполнит очередную газовую декларацию - теперь с Турцией и Азербайджаном. www.regnum.ru/news/1090552.html 28.11.2008.

վերջինիս այցից առաջ Բերդիմուհամեդովը ցանկանում է համապատասխան ֆոն ստեղծել գազի գների շուրջ նոր բանակցությունների համար:

Այսինքն՝ անդրկասպյան գազամուղի ստեղծումը և Nabucco ծրագրի իրականացումը մասնագետներին քիչ հավանական է թվում և հետևաբար այս բանակցային ողջ գործընթացը որոշ երկրներ, մասնավորապես՝ Ադրբեջանը և Թուրքմենստանը, ցանկանում են օգտագործել Արևմուտքում սեփական դերի բարձրացման համար, այստեղից բխող որոշ քաղաքական դիվիդենտներով: Վերջիններս ցանկանում են նաև Ռուսաստանից գազի շուրջ հնարավոր բանակցությունների դեպքում իրական նյութական շահ ստանալ, օրինակ՝ գազի գինը հերթական անգամ բարձրացնելով: Հիշեցնենք, որ Մոսկվան Ադրբեջանին առաջարկել է գնել Շահ-դենիզից արդյունահանվող գազի ողջ պաշարը, և սա ևս առիթ է վերջինիս համար սեփական քաղաքական և էներգետիկ նշանակությունը շեշտելու համար:

Արմեն Մանվելյան

**«ԲՐԻԹԻՇ ՓԵԹՐՈԼԻՈՒՄ». ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ**

